

**«ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ
ԳԻՏԱԿԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ**

Ա. Ա. Հարությունյան

*Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզա-
ռոդջարարական ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր*

**Հանգուցային բառեր և արտա-
հայտություններ.** ադապտիվ ֆի-
զիկական կուլտուրա, ադապտիվ
սպորտ, պարաօլիմպիական խաղեր,
հասարակություն, ներառում, վերա-
կանգնում, մարզիչ-մանկավարժ:

Մարդկության կյանքի արդյունա-
բերության զարգացմամբ և քաղա-
քականության ընդլայնմամբ պայմա-
նավորված՝ հանրության շրջանում
աճեց հաշմանդամությունը, որը
հիմք հանդիսացավ այնպիսի նոր
մասնագիտության առաջացմանը,
ինչպիսին է ադապտիվ ֆիզիկա-
կան կուլտուրան: Ներկայումս գործ-
նականում ադապտիվ ֆիզիկական
կուլտուրան և ադապտիվ սպորտը
գոյություն ունեն, սակայն այդ մաս-
նագիտության վերաբերյալ գիտա-
կան պատկերացումները դեռևս լիո-
վին չեն բացահայտվել:

Մեր նպատակն է հիմնավորել
ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի
և ադապտիվ սպորտի գիտական ու
սոցիալական նշանակությունը:

Միայն վերջին տասնամյակ-
ներում է հայ հասարակությունը
ուշադրություն դարձրել կրթության
առանձնահատուկ պայմանների կա-
րիք ունեցող անձանց սոցիալական

խոշոր զանգվածի հիմնահարցերին
[1]: Էկոլոգիական արհավիրքները,
պատերազմները, ժառանգական
հիվանդությունները, արդյունաբե-
րության մեջ և կենցաղում ստա-
ցած վնասվածքները հանգեցնում
են հաշմանդամության, արդյունքում՝
տարեցտարի ավելանում է հաշման-
դամների քանակը:

Հաշմանդամների համար կեն-
սագործունեության լավագույն պայ-
մաններ ստեղծելու, նրանց հասարա-
կության (սոցիումի) մեջ ներգրավելու
(ինտեգրացիայի) և հոգեֆիզիոլո-
գիական հարմարումը ապահովելու
նպատակով էլ հենց ստեղծվել է այս
գիտությունը:

Կրթության առանձնահատուկ
պայմանների կարիք ունեցող ան-
ձանց մարզելիս առաջադրվում են
սկզբունքորեն այլ խնդիրներ, ֆիզի-
կական կուլտուրայի ձևերի, նորարա-
րական մոտեցումների վերաբերյալ
(կիրառվող միջոցների և մեթոդների
վերամշակումների միջոցով) [2, էջ
144]:

Հիմնական խնդիրն այն է, որ ձևա-
վորվեն մարզվողների գիտակցա-
կան վերաբերմունք և վստահություն
իրենց ուժերի նկատմամբ, վճռա-

կան և համարձակ գործողությունների գնալու պատրաստակամություն, հաղթահարվեն ֆիզիկական բեռնվածությունները, ապահովվի համակարգված մասնակցություն ֆիզիկական կուլտուրայի պարամունքներին և, հետևելով վալետլոգների խորհուրդներին՝ [3] իրականացվեն առողջ ապրելակերպի դրույթները:

Ներկայումս ադապտիվ ֆիզիկական կուլտուրան ձեռք է բերել ուսումնական առարկայի կարգավիճակ, քանի որ այն համապատասխանում է հետևյալ չափանիշներին.

1. Ունի հստակ ընդգծված առարկայական դաշտ, առաջադրում է կենսականորեն կարևորություն ունեցող հարցեր, քննարկում և վերլուծում է ընդհանուր ճանաչում ունեցող կարևոր թեմաներ, ունի ձևավորված նպատակներ:

2. Ունի հարուստ պատմություն և հասարակական ճանաչում, որը հիմնված է ճշգրիտ փորձի վրա:

3. Իր արմատներով պայմանավորված է որոշակի՝ այդ թվում և գիտական, կառուցվածքային և ունի հայեցակարգային հիմնավորում:

4. Ուսումնական առարկան իրենից ներկայացնում է մի առանձնահատուկ, ուրույն ամբողջականություն:

5. Բնութագրվում է արարողություններով և մեթոդներով, որոնց վրա հենվում է առարկան, ինչպես նաև առաջնորդվում է որոշակի օրենքներով:

2003 թվականին ՖԿՀՊԻ-ում բացվեց նշված մասնագիտության բաժինը, իսկ 2008 թվականին հիմնադրվեց ֆիզիկա-

կան կուլտուրայի ամբիոնը: Չորս կուրսերի յուրաքանչյուր խմբում ներգրավված են 15-ական ուսանողներ: Քանի որ ԲՈւՀ-ն ավարտելուց հետո նրանք աշխատելու են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ, ուստի ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետի կրթության համակարգում ընդգրկված է հոգեբանական և բժշկականաբանական առարկաների մի ամբողջական փաթեթ:

Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում դասավանդվող նշված առարկաներն ընձեռում են բժշկական և հոգեբանական հիմնահարցերի խորը բազային գիտելիքներ ունեցող մասնագետներ պատրաստելու հնարավորություն: Այդ մասնագետները տիրապետում են հաշմանդամների և հիվանդների տարբեր խմբերի հետ աշխատելու հմտություններին և խորը պատկերացումներ ունեն մարդու կենսաբանական, սոցիալական և ախտաբանական հարցերի մասին: Այն հնարավորություն կտա ոչ միայն գրագետ կերպով օգնություն ցույց տալ այդ անձանց՝ վնաս չհասցնելով նրանց, այլև նպաստել նրանց համաչափ զարգացմանը, հասարակության մեջ մտնելու, գործընթացի ապահովմանը: Հուսով ենք, որ այս գիտելիքների ստեղծագործական կիրառումը որոշակի մասնագիտական գործունեության շրջանակներում (հաշմանդամների բնական, հոգեկան, կամային, հուզական ոլորտների վրա) կունենա հզոր ներգործություն, կնպաստի շարժողական ակտիվության անհրաժեշտության գիտակցության ձևավորմանը և ֆիզիկական կուլտուրայի արժեքների

ողջ համակարգի յուրացմանը:

Հաշմանդամների սպորտային շարժումները ներկայացված են պարաօլիմպիական շարժման և «Special olympics» ծրագրի շրջանակներում: Պարաօլիմպիական շարժման մեջ մասնակցում են հենաշարժողական համակարգի, ինչպես նաև տեսողության և լսողության խանգարումներ ունեցող հաշմանդամ-մարզիկները:

Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող հաշմանդամ-մարզիկները սկսել են պարաօլիմպիկ խաղերին մասնակցել միայն վերջին ժամանակներս: Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող անձանց համար հիմնական սպորտային միջոցառումները «Special olympics»-ի խաղերն են: Այս ծրագիրն իրենից ներկայացնում է սպորտային շարժման հատուկ ձև, որտեղ հաղթող է ճանաչվում յուրաքանչյուր մասնակից:

Հաշմանդամների համար սպորտային ակումբների գոյությունը, դրանց թվաքանակի ավելացումը և հատկապես դրանց բաշխումն ըստ պարապոլների բնակության վայրի ստեղծում է ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականության բարձրացման խնդիրը լուծելու և տարբեր կատեգորիայի հաշմանդամների համար սոցիալական ռեաբիլիտացիայի պայմաններ:

Հաշմանդամային խմբերում պարապելը նախատեսում է տարբեր մարզաձևերով պարբենաբար մարզումներ, ինչպես նաև մասնակցություն մրցումներին: Դրանք անց է կացնում տվյալ մարզաձևի մարզիչ-մանկավարժը հատուկ դահլիճում կամ մարզակառույցներում՝ մարզա-

կան սարքավորումների և կահավորման օգտագործմամբ: Այս ճանապարհով հնարավոր է դառնում հասնել բարձր մարզական և հարմարողական արդյունքի: Սակայն բոլոր հաշմանդամները մինչև մարզվելը պետք է ըստ վերականգնողական ծրագրի առողջարարական խմբերում անցնեն նախնական պատրաստություն: Այս պարտադիր պայմանն ընձեռում է օրգանիզմը հետագա բեռնվածությանը հարմարվելու հնարավորություն և հիմք է ստեղծում մարզական շարժողական հմտությունների ձևավորման համար:

Հասարակական կազմակերպություններում և ֆեդերացիաներում պարապմունքները հիմնականում վարում են ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի շրջանավարտներն ու ուսանողները: Մեր նպատակներից մեկը այնպիսի արդյունքների հասնելն է, որ յուրաքանչյուր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ ունենա իր անձնական մարզիչը: Այս ճանապարհով է միայն հնարավոր հասնել բարձր մարզական և հարմարողական արդյունքի:

Հաշմանդամների հետ տարվող մարզական աշխատանքը ուսանողները կատարում են կամավոր, անց են կացվում մարզական տոնակատարություններ և մրցումներ:

Կարելի է ասել, որ տասը տարիների ընթացքում այս մասնագիտությունը ձեռք է բերել որոշակի արդյունքներ, սակայն սա դեռ սկիզբն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Ա.Ա. Արգարյան Զ.Վ., Ադապտիվ ֆիզկուլտուրայի միջոցների դերը զարգացման համակցված խանգարումներով (ԶՀԽ) երեխաների շարժողական ֆունկցիաների վերականգնման գործում, Եր., 2009, 5 էջ:

2. Հարությունյան Ա.Ա. Հովեյան Ս.Հ., Ադապտիվ ֆիզիկական կուլտուրան և հաշմանդամային սպորտը՝ որպես վերականգնման և սոցիալական ինտեգրման հիմնական միջոց, Եր., 2010, 5 էջ:

3. Вайнер Э.Н. Валеология. М.: Флинта: Наука, 2006. – 416 с.

РЕЗЮМЕ

СОЦИАЛЬНОЕ И НАУЧНОЕ СТАНОВЛЕНИЕ СПЕЦИАЛЬНОСТИ “АДАПТИВНАЯ ФИЗИЧЕСКАЯ КУЛЬТУРА”

А.А. Арутюнян

декан спортивно-оздоровительного факультета Армянского государственного института физической культуры кандидат биологических наук, профессор

В работе представлено обоснование научной и социальной значимости специальности адаптивной физической культуры. Рассматриваемый круг вопросов актуален для адаптивного спорта. Рассмотрены основные функции адаптивной физической культуры, как объективно присущие ей свойства

воздействия на человека и человеческие отношения, удовлетворения и развития определенных потребностей личности и общества. Эти функции реализуются в процессе адаптивной физической образовательной деятельности, в них раскрывается содержание физической культуры.

SUMMARY

SOCIAL AND SCIENTIFIC DEVELOPMENT OF THE “ADAPTIVE PHYSICAL EDUCATION” SPECIALITY

A.A. Harutyunyan

Candidate of Biological Sciences, Professor, Dean of faculty of Health training and Sport of Armenian State Institute of Physical Culture

The article presents the study of scientific and social importance of adaptive physical education. The considered range of issues is relevant to the adaptive sport. It is shown that physical training is a type of social activity of a modern man. The basic functions of adaptive physical education were examined, as objectively

inherent properties of human exposure and human relations, and meet the specific needs of individuals and society. Those functions are being implemented during the adaptive physical education, they reveal the true content of physical education.